IEP-ն և Դուք

Ծնողների ուղեցույց՝ անհատականացված կրթական ծրագրի (IEP) թիմի հանդիպման մասին տեղեկություններով

Հատուկ կրթության վարչություն
Վերանայվել է 2024 թ. դեկտեմբերին

Ծնողներ և խնամակալներ,

Դուք ստանում եք այս ուղեցույցը, որովհետև ձեր երեխան ուղեգրվել է հատուկ կրթության գնահատման կամ ներկայումս ստանում է հատուկ կրթության ծառայություններ: Ուղեցույցը մշակվել է ընտանիքներին աջակցելու և Անհատական կրթական ծրագրի (IEP) վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով: IEP-ն գրավոր փաստաթուղթ է, որը նկարագրում է աշակերտի ընթացիկ կատարողական մակարդակը, նպատակները, տեղավորումը դպրոցում և մատուցվող ծառայությունները: IEP-ն այն փաստաթուղթն է, որը ձեր աշակերտին ապահովում է անվճար և համապատասխան հանրային կրթություն (FAPE) և երաշխավորում է, որ նրա կրթությունը հարմարեցված է իր յուրահատուկ կարիքներին: Արդյունավետ IEP-ի մշակումը և իրականացումը ենթադրում է բազմաթիվ մարդկանց մասնակցություն, տարբեր փուլեր և համատեղ որոշումների կայացում:

Հաշմանդամություն ունեցող աշակերտների ծնողները/խնամակալները IEP թիմի անդամներ են և մասնակցում են IEP գործընթացին՝ ներառյալ IEP-ի մշակմանը և FAPE-ի անհատական որոշմանը: Այս ուղեցույցը տեղեկատվություն է տրամադրում IEP-ի մշակման գործընթացի մասին՝ սկսած նրանից, թե ինչպես է կազմվում IEP-ն, ինչ է տեղի ունենում IEP թիմի հանդիպման ընթացքում, և ինչ կարելի է սպասել դրանից հետո: Այս հրապարակումը իրավաբանական խորհրդատվություն չէ և չպետք է դիտարկվի որպես անկախ իրավաբանական խորհրդատվություն ստանալու փոխարինում:

Հատուկ կրթության բաժինը առաջարկում է, որ ընտանիքները նաև ծանոթանան *«Ծնողների ուղեցույցը հատուկ կրթության ծառայությունների մասին (ներառյալ ընթացակարգային իրավունքները և երաշխիքները)»* փաստաթղթին՝ հատուկ կրթության գործընթացի և իրենց իրավունքների մասին ավելին իմանալու համար: Այս փաստաթղթի պատճենը ձեզ կտրվի ձեր աշակերտի գնահատման ծրագրի հետ միասին և նաև IEP թիմի հանդիպման ընթացքում: 14 տարեկան և ավելի բարձր տարիքի կամ մինչև 9-րդ դասարան հասած աշակերտների ծնողներին/խնամակալներին խորհուրդ է տրվում նաև ծանոթանալ *«ITP-ն և Դուք»* ուղեցույցին, որը նկարագրում է անցումային ծրագրերը՝ աշակերտին մեծահասակ կյանքի համար նախապատրաստելու նպատակով:

Եթե հատուկ կրթությանը կամ աշակերտի IEP-ին առնչվող հարց կամ մտահոգություն ունեք, խնդրում ենք կապվել Հատուկ կրթության վարչության Դպրոցի և ընտանիքի աջակցության (SFSS) զանգերի կենտրոնի հետ՝ (213) 241-6701 հեռախոսահամարով կամ spedsfss@lausd.net էլ. հասցեով:

Հատուկ կրթության վարչության կայքը նույնպես պարբերաբար թարմացվում է և ներառում է օգտակար տեղեկատվություն գլխավոր էջում և Parents բաժնում՝ https://sped.lausd.org:

Շնորհակալություն ձեր աշակերտի շահերը պաշտպանելու և համագործակցության համար:

Հարգանքով՝

Հատուկ կրթության վարչություն

Փաստաթղթում տեղ գտած 12 հղումների աղբյուրների ցանկը կգտնեք 22-րդ էջում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

FAPE-Ն ԵՎ ԴՐԱ ԳԱՂԱՓԱՐԸ 5
IEP-Ի ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ[4] 6
IEP ԹԻՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ 7
ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ IEP ԹԻՄԻ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ 8
ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ IEP ԹԻՄԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ[8] 9
ԸՆԹԱՑԻԿ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ (PLP) 10
ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ 11
ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՆՊԱՏԱԿՆԵՐ 11
ՆՎԱՃԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՈՎ 12
ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ (LRE) ՏԵՂԱՎՈՐՈՒՄ 12
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
IEP-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 17
ՀԱՃԱԽ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԵԶՐԵՐ 19
ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 21
ՀՂՈՒՄՆԵՐ 22

FAPE-Ն ԵՎ ԴՐԱ ԳԱՂԱՓԱՐԸ

F — **FREE (անվճար)** նշանակում է, որ դուք ոչինչ չեք վճարում:

A — **APPROPRIATE (համապատասխան)** նշանակում է, որ աշակերտն իրավունք ունի ստանալու այնպիսի կրթություն և ծառայություններ, որոնք մշակված են հատուկ իր կարիքները բավարարելու համար:

P — **PUBLIC (հանրային)** նշանակում է կրթություն, որը տրամադրվում է հանրային դպրոցների կողմից՝ նահանգի ստանդարտներին համապատասխան:

E — **EDUCATION (կրթությունը)** պետք է լինի անհատականացված և մշակված այնպես, որպեսզի օգուտ տա աշակերտին՝ հաշվի առնելով նրա հանգամանքները:

Եթե աշակերտը իրավասու է ստանալու հատուկ կրթության ծառայություններ, ապա դաշնային օրենքի համաձայն, որը հայտնի է որպես Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մասին օրենք (Individuals with Disabilities Education Act, IDEA), նա իրավունք ունի ստանալու անվճար և համապատասխան հանրային կրթություն (Free Appropriate Public Education, FAPE)՝ առանց ընտանիքի համար որևէ ծախսի:[1] FAPE-ն ապահովվում է IEP գործընթացի միջոցով, որը կբացատրվի այս ուղեցույցում:

FAPE-ն յուրաքանչյուր աշակերտի համար տարբեր է, քանի որ յուրաքանչյուր աշակերտ ունի իր յուրահատուկ կամ անհատական կարիքները: Ընդհանուր առմամբ, հատուկ կրթության աջակցություն և ծառայություններ ստացող աշակերտները պետք է հնարավորություն ունենան օգտվելու ընդհանուր կրթության ուսումնական ծրագրից և առաջընթաց գրանցելու դրանում: Նրանք նաև պետք է, ըստ անհրաժեշտության, կարողանան լիարժեք մասնակցել դպրոցի կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումներին:

Դաշնային օրենքը պահանջում է, որ հաշմանդամություն ունեցող աշակերտները հնարավորինս կրթություն ստանան ընդհանուր կրթության դասարանում՝ հաշմանդամություն չունեցող հասակակիցների հետ՝ ելնելով այն բանից, թե ինչն է առավել պատշաճ աշակերտի համար: Սա կոչվում է նվազագույն սահմանափակումներով միջավայր (Least Restrictive Environment, LRE):[2] LRE նշանակում է, որ IEP թիմը նախ պետք է դիտարկի աշակերտին կրթելու հնարավորությունը այն դպրոցում, որը նա կհաճախեր, եթե հաշմանդամություն չունենար՝ ընդհանուր կրթության դասարանում, համապատասխան աջակցություններով և ծառայություններով: Եթե IEP թիմը գտնում է, որ աշակերտի յուրահատուկ կարիքները այնտեղ չեն կարող բավարար կերպով ապահովվել, ապա դիտարկվում են այլ տարբերակներ: LRE-ն նաև ավելի մանրամասն բացատրվում է այս ուղեցույցում:

IDEA օրենքը հստակ նշում է, որ ծնողները և խնամակալները լիարժեք և հավասար գործընկերներ են դպրոցի հետ՝ աշակերտների կարիքները որոշելու և դրանք բավարարելու գործընթացում:[3]

IEP-Ի ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ[4]



Նշում. ծնողը/խնամակալը կարող է ցանկացած ժամանակ դիմել IEP թիմի հանդիպում կազմակերպելու խնդրանքով, եթե դա անհրաժեշտ է համարում: Այս հանդիպումը պետք է անցկացվի դիմումը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

IEP ԹԻՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հանդիպման սկզբում IEP թիմի անդամները կներկայանան: Երբեմն IEP թիմի որոշ անդամներ կարող են ազատվել հանդիպման ամբողջ ընթացքում կամ դրա մի մասում մասնակցելուց՝ ձեր գրավոր համաձայնությամբ և Շրջանի համաձայնությամբ:[5]

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

Ծնող կամ խնամակալ

Ճանաչում է աշակերտի ուժեղ կողմերը, պահանջմունքներն ու առանձնահատկությունները:

Դպրոցի ադմինիստրատոր

Տիրապետում է հատուկ կրթության ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությանը և ունի շրջանի ռեսուրսները տրամադրելու լիազորություն:

Հատուկ կրթության ուսուցիչ

Կրթական մասնագետ, որը գիտելիքներ ունի աշակերտի հաշմանդամության և աշակերտի առաջընթացի վրա դրա ազդեցության մասին:

Ընդհանուր ուսուցիչ

Ընդհանուր կրթության ուսուցիչ, որը իրականացնում է հիմնական ուսուցումը և անհրաժեշտ հարմարեցումներն ու փոփոխությունները:

Շրջանի որակավորված մասնագետ

Կբացատրի գնահատման արդյունքները և կօգտագործի դրանք ուսուցումը պլանավորելու համար: Կարող է լինել գնահատող, հարակից ծառայություններ տրամադրող կամ նման թիմի անդամ:

ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

Այլ իրազեկ մասնակիցներ

Այլ մասնակիցներ, որոնք ճանաչում են աշակերտին կամ նրա մասին մասնագիտական գիտելիքներ ունեն՝ ծնողի/խնամակալի կամ Շրջանի հրավերով:

Աշակերտ

Երբ մշակվում է անհատական անցումային պլանը (ITP), աշակերտը կարող է հրավիրվել IEP թիմի հանդիպմանը:

Կազմակերպության ներկայացուցիչ

Ներկայացուցիչ կողմնակի կազմակերպությունից, որը հավանաբար ծառայություններ կմատուցի աշակերտին:*

Բանավոր թարգմանիչ

Շրջանի կողմից նշանակված որակավորված մասնագետ, եթե թարգմանչի ծառայությունների կարիք կա:

*Այլ կառույցների օրինակներ են, առանց սահմանափակման, խմբային բնակության հաստատությունների ներկայացուցիչները, ոչ հանրային դպրոցները, տարածաշրջանային կենտրոնները և/կամ վերականգնողական ծառայությունների վարչությունը:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ IEP ԹԻՄԻ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

ԾԱՆՈԹԱՑԵՔ

- **Կարդացեք** IEP հանդիպմանը մասնակցության մասին ծանուցումը
- **Լրացրեք** ծանուցումը և վերադարձրեք հնարավորինս շուտ
- **Ծանոթացեք** *«Հատուկ կրթության ծառայությունների ծնողական ուղեցույցը (ներառյալ Ընթացակարգային իրավունքներն ու երաշխիքները)»* փաստաթղթին: Եթե աշակերտը 14 տարեկան է կամ ավելի մեծ, կամ մինչև 9-րդ դասարան, ծանոթացեք նաև *«ITP-ն և Դուք»* ուղեցույցին
- **Ծանոթացեք** դպրոցի ցանկացած գրառման կամ դիմեք դպրոցին՝ գրառումների պատճեններ ստանալու համար՝ IEP թիմի հանդիպումից առաջ դրանք ուսումնասիրելու նպատակով[7]

ՏԵՂԵԿԱՑՐԵՔ

- **Խնդրեք** անհրաժեշտ հատուկ հարմարեցումները, եթե դրանք պետք են ձեր աշակերտի IEP-ի մշակման գործընթացին մասնակցելու համար, օրինակ՝ թարգմանություն կամ բրայլյան տառատեսակով պատճեններ
- **Տրամադրեք** դպրոցին վերջին մասնավոր գնահատումների հաշվետվությունները, որոնցով զանկանում եք կիսվել

ՄԱՍՆԱԿՑԵՔ

- **Խոսեք** աշակերտի ուսուցչի (ուսուցիչների) հետ նրա առաջընթացի մասին
- **Խոսեք** աշակերտի հետ անձնական դպրոցական նպատակների զարգացման մասին
- **Հրավիրեք** աշակերտին մասնակցելու IEP թիմի հանդիպմանը

ԴԼԱՆԱՎՈՐԵՔ

- **Նշումներ արեք** և գրեք ձեր հարցերը՝ IEP թիմի հանդիպմանը քննարկելու համար
- **Մտածեք** ընդհանուր կրթությանը աշակերտի մասնակցության մասին
- **Ճանաչեք** ձեր իրավունքները

ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ IEP ԹԻՄԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ[8]

IEP թիմի բոլոր անդամները հավաքվում են՝ քննարկելու աշակերտի իրավիճակը և որոշելու՝ արդյոք նա ունի հատուկ կրթության ծառայությունների կարիք, թե ոչ: Հանդիպման ընթացքում, որպես IEP թիմի անդամ, դուք պետք է՝

- կիսվեք տեղեկություններով աշակերտի մասին: Մի հապաղեք հարցեր տալ կամ խնդրել բացատրություններ:
- արտահայտեք ձեր կարծիքը աշակերտի շահերը պաշտպանելով, եթե ինչ-որ բանի հետ համաձայն չեք: Ազատորեն ներկայացրեք ձեր մտահոգությունները և ձեր տեսակետը: Որպես IEP թիմի անդամ՝ դուք իրավունք ունեք մասնակցելու քննարկմանը:
- հիշեք, որ IEP թիմի նպատակն է՝ մշակել կրթական ծրագիր, որը կհամապատասխանի աշակերտի անհատական կարիքներին:

Բացի *«IEP-ն և Դուք»* ուղեցույցից՝ ձեզ կառաջարկվեն նաև ստորև նշված ուղեցույցները: IEP թիմի ադմինիստրատորը ձեզ կբացատրի այդ ուղեցույցների բովանդակությունը:

- *Ծնողների ուղեցույցը հատուկ կրթության ծառայությունների մասին (ներառյալ ընթացակարգային իրավունքները և երաշխիքները)*
- *ITP-ն և Դուք*, եթե աշակերտը 14 տարեկան է կամ ավելի մեծ, կամ մինչև 9-րդ դասարան

IEP թիմի հանդիպումը կանցկացվի օրակարգի համաձայն, որը նման կլինի ստորև նկարագրվածին.



ԸՆԹԱՑԻԿ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ (PLP)

PLP-ները նկարագրում են, թե ինչ կարող է անել ձեր աշակերտը և ինչ պետք է սովորի ուսումնական և պրակտիկ հմտությունների ոլորտներում, օրինակ՝ կարդալ, գրել, մաթեմատիկա, վարքագիծ կամ ինքնասպասարկման հմտություններ: Այս տեղեկությունը ստացվում է տարբեր աղբյուրներից, օրինակ՝ դասարանում գրանցված առաջադիմությունից, հաշվետվության (report card) գնահատականներից, թեստերի արդյունքներից, դասարանում կիրառված միջամտություններին աշակերտի արձագանքից, ինչպես նաև ծնողի/խնամակալի, ուսուցչի և ծառայություններ մատուցող մասնագետների կարծիքներից:

PLP-ները ներառում են նաև հայտարարություն, որը նկարագրում է, թե ինչպես է հաշմանդամությունն ազդում ձեր աշակերտի մասնակցության և առաջընթացի վրա ընդհանուր կրթության ուսումնական ծրագրում: Նախադպրոցական տարիքի երեխաների դեպքում այն նկարագրում է, թե ինչպես է հաշմանդամությունն ազդում սովորական նախադպրոցական միջոցառումներին աշակերտի մասնակցության վրա:

PLP-ները պետք է քննարկվեն և ձևակերպվեն այնպես, որ IEP թիմի անդամները ստանան այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է ձեր աշակերտի համար ճիշտ կրթական որոշումներ կայացնելու և նրա առաջընթացը մեկ ուսումնական տարվանից մյուսը գնահատելու համար:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ PLP-Ի ՆՄՈՒՇ

Ուժեղ կողմեր. Մաքսը կարողանում է հաշվել, կարդալ և գրել ամբողջ թվերը մինչև 100-ը՝ առանց օրինակի օգտագործման: Նա կարողանում է գումարել և հանել առանց վերախմբավորելու: Կարողանում է կազմել և լուծել մեկ գործողություն պահանջող գումարման և հանման խնդիրներ: Կարողանում է ասել ժամը, բայց ոչ՝ րոպեները: Ծնողի խոսքով՝ Մաքսը տանը սիրում է բարձրաձայն հաշվել առարկաները և հասկանում է զույգերի գաղափարը:

Պահանջմունքներ. Մաքսը դժվարանում է գումարել և հանել երկնիշ թվեր վերախմբավորելով: Ուսուցչի խոսքով՝ նա չգիտի 2-ի և 5-ի բազմապատկման աղյուսակը: Նա չի կարողանում ասել ժամը կես ժամի ճշգրտությամբ: Դժվարանում է ընտրել ճիշտ գործողությունը՝ երկու կամ երեք գործողություն պահանջող խնդիրներ լուծելու համար: Ծնողը հայտնում է, որ Մաքսը նույն դժվարություններն է ցուցաբերում նաև տանը՝ մաթեմատիկայի տնային աշխատանք կատարելիս:

Հաշմանդամության ազդեցությունը. Մաքսի ուսանելու որոշակի խանգարումըSpecific Learning Disability) ազդում է մաթեմատիկական հասկացությունները հիշելու և մտապահելու կարողության վրա, ինչը դժվարացնում է ավելի բարդ մաթեմատիկական գործողություններ կատարելը և երկու ու երեք գործողություն պահանջող խնդիրներ լուծելը: Դա ազդում է նրա մասնակցության և առաջընթացի վրա ընդհանուր կրթության ծրագրում:

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

Նախորդ կրթական միջամտությունները, առկա տվյալների վերանայման արդյունքում ստացված տեղեկությունները, թեստերի արդյունքները և հանդիպման ընթացքում ներկայացված այլ համապատասխան տեղեկություններ դիտարկելուց հետո IEP թիմը կորոշի՝ արդյոք աշակերտը ունի օրենքով սահմանված հաշմանդամություն և արդյոք նա ունի հատուկ կրթության կարիք:[9] [10]

Որոշ աշակերտներ, որոնք ունեն հաշմանդամություն, կարող են իրավասու չլինել հատուկ կրթության ծառայությունների համար, քանի որ նրանք բավարար առաջընթաց են գրանցում ընդհանուր կրթության ծրագրում:

Եթե պարզվի, որ աշակերտը իրավասու չէ հատուկ կրթության ծառայությունների համար, կարող են դիտարկվել աջակցության այլ ձևեր, օրինակ՝ ընդհանուր կրթության աջակցություններ, այդ թվում՝ Աշակերտի աջակցության և առաջընթացի թիմ (Student Support and Progress Team, SSPT) կամ Section 504 պլան:

Եթե աշակերտը իրավասու է հատուկ կրթության համար, թիմը կքննարկի, կմշակի և որոշում կկայացնի հետևյալի վերաբերյալ[8].

ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՆՊԱՏԱԿՆԵՐ

Ուսումնական և գործառնական նպատակները մշակվում են աշակերտի PLP-ներում քննարկված կարիքների հիման վրա: Նպատակները նկարագրում են, թե ընդհանուր առմամբ ինչ կարող է ակնկալվել, որ աշակերտը կկարողանա անել մոտավորապես 12 ամսվա ընթացքում: Ուսումնական նպատակները պետք է հիմնված լինեն Կալիֆոռնիա նահանգի չափորոշիչների վրա, իսկ այն աշակերտների համար, որոնք սովորում են ընդհանուր կրթության ծրագրով, նպատակները պետք է համապատասխանեն դասարանի մակարդակին: Ենթանպատակները քայլեր են, որոնք օգնում են հասնել այդ նպատակներին:

Եթե աշակերտն արդեն ունի IEP, ապա IEP թիմը քննարկում է նախորդ նպատակների ուղղությամբ գրանցված առաջընթացը: Նոր նպատակների համար IEP թիմը որոշում է, թե ինչպես է չափվելու և ներկայացվելու աշակերտի առաջընթացը:

Թիրախավորում է այն, թե ինչի վրա է աշխատելու աշակերտը՝ հիմնվելով նրա PLP-ի վրա

Հատուկ է աշակերտին և նրա պահանջմունքներին

Առաջընթացի մասին կտեղեկացվի յուրաքանչյուր հաշվետու գնահատման շրջանի ընթացքում

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՈՎ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ (LRE) ՏԵՂԱՎՈՐՈՒՄ

Այն բանից հետո, երբ IEP թիմը որոշում է, թե ինչ նպատակների պետք է հասնի աշակերտը, պետք է որոշում կայացվի նաև այն մասին, թե որտեղ կարող են բավարարվել նրա պահանջմունքները: Այն վայրը, որտեղ իրականացվում է աշակերտի IEP-ը, կոչվում է տեղավորում: Աշակերտի տեղավորումը որոշելիս IEP թիմը պետք է համոզվի, որ աշակերտը կրթություն կստանա հաշմանդամություն չունեցող աշակերտների հետ միասին՝ առավելագույն հնարավոր չափով, որքանով դա պատշաճ է նրա դեպքում: Այս որոշումը կայացնելիս թիմը հաշվի է առնում ուսումնական, ոչ ուսումնական և արտադասարանական գործունեությունը: Որոշումը այն մասին, թե ինչ հասակակիցների հետ պետք է կրթություն ստանա աշակերտը, օրենքի կարևոր պահանջներից է և կոչվում է նվազագույն սահմանափակումներով միջավայր (Least Restrictive Environment, LRE):[2] Աշակերտի IEP թիմը պետք է որոշի նրա LRE-ն՝ հաշվի առնելով հետևյալը.

- Տեղաբաշխումը որոշվում է առնվազն տարին մեկ անգամ:
- Այն հիմնվում է աշակերտի IEP-ի վրա:
- Եթե IEP-ն այլ կազմակերպում չի պահանջում, աշակերտը կրթություն է ստանում այն դպրոցում, որը կայցելեր, եթե չունեներ հաշմանդամություն (բնակության վայրի դպրոց):
- Եթե աշակերտը չի կարող կրթություն ստանալ իր բնակության վայրի դպրոցում, տեղավորումը պետք է լինի հնարավորինս մոտ նրա բնակության վայրին:
- Տեղավորման տարբերակները դիտարկելիս IEP թիմը պետք է հաշվի առնի աշակերտի վրա կամ նրա համար անհրաժեշտ ծառայությունների որակի վրա հնարավոր վնասակար ազդեցությունները:
- Անկարողություն ունեցող աշակերտը չի կարող հեռացվել իր տարիքին համապատասխան ընդհանուր կրթության դասարանից միայն այն պատճառով, որ նրան անհրաժեշտ են ընդհանուր կրթության ուսումնական ծրագրի փոփոխություններ:

Թե յուրաքանչյուր աշակերտի համար որն է *նվազագույն սահմանափակումներով* միջավայրը, որոշվում է այդ աշակերտի անհատական կարիքների հիման վրա: Սա նշանակում է, որ Շրջանը չի կարող կիրառել «բոլորի համար նույնը» մոտեցում՝ հաշմանդամություն ունեցող աշակերտների կրթությունը կազմակերպելիս: Որոշումները պետք է հիմնվեն աշակերտի անհատական կարիքների վրա, ինչպես դրանք նշված են IEP-ում, և **ոչ** թե՝

- աշակերտի հաշմանդամության վրա (օրինակ՝ աշակերտին տեղավորել մտավոր խանգարումներ ունեցող աշակերտների հատուկ կրթության դասարանում միայն այն պատճառով, որ նա ունի ճանաչողական ուշացումներ, կամ տեղավորել որևէ կոնկրետ ուսանելու որոշակի անկարողության ծրագրում միայն այն պատճառով, որ նրան անհրաժեշտ են այդ ծառայությունները),
- անձնակազմի գտնվելու վայրի վրա,
- հասանելի ֆինանսական միջոցների վրա, կամ
- դպրոցական շրջանի հարմարության վրա:

Այլընտրանքային տեղավորումների շարունակական շարք

Աշակերտի տեղավորումը ընդհանուր կրթության դասարանում առաջին տարբերակն է, որը պետք է դիտարկի IEP թիմը: LAUSD-ի դպրոցները պարտավորվել են աջակցել նվազագույն սահմանափակումներով միջավայրի (LRE) և ներառական կրթության սկզբունքներին՝ բարձր չափանիշներ սահմանելով բոլոր աշակերտների համար, ապահովելով, որ հաշմանդամություն ունեցող աշակերտները կարողանան շփվել մյուս աշակերտների հետ, ապահովելով ընդհանուր կրթության ուսումնական ծրագրի հավասար հասանելիություն, հետևելով ուսուցման և առաջադիմության ընթացքին, ինչպես նաև ապահովելով համապատասխան հատուկ կրթական ուսուցողական, ծրագրային և վարքային աջակցություններ ու ծառայություններ, որոնք դպրոցական միջավայրում կազմակերպվում են աշակերտի անհատական կարիքները բավարարելու համար: Այնուամենայնիվ, քանի որ յուրաքանչյուր աշակերտ տարբեր է, և որոշ աշակերտների կարող են անհրաժեշտ լինել աջակցություններ ընդհանուր կրթության դասարանից դուրս, Շրջանը պարտավոր է ապահովել և հասանելի դարձնել տեղավորման հնարավոր տարբերակների շարունակական շարք: Այս շարքը ներառում է տեղավորման զանազան տարբերակներ, որտեղ աշակերտները կարող են ստանալ ծառայություններ: Աշակերտները կարող են տեղավորվել մեկ միջավայրում կամ մի քանի միջավայրերում այդ շարքի շրջանակում՝ կախված իրենց յուրահատուկ կարիքներից:

LEAST RESTRICTIVE ENVIRONMENT
CONTINUUM OF ALTERNATIVE PLACEMENTS

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՈՎ

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՈՎ

Ընդհանուր կրթության դասարան

Աշակերտը ուսուցում է ստանում ընդհանուր կրթության դասարանում՝ անհրաժեշտության դեպքում հարմարեցումներով կամ փոփոխություններով

- աջակցությամբ/ծառայություններով՝ ընդհանուր կրթության կամ հատուկ կրթության ուսուցչի, հարակից ծառայություններ տրամադրող մասնագետի և/կամ օգնական մասնագետի կողմից
- հատուկ կրթության ուսուցչի խորհրդատվությամբ և համագործակցությամբ՝ անհատականացված ուսուցումը պլանավորելու և ապահովելու համար:

Հատուկ կրթության դասարան

Աշակերտը ուսուցում է ստանում հատուկ կրթության դասարանում իր դպրոցական օրվա ամբողջ ընթացքում կամ դրա մի մասում՝ հետևյալ աջակցություններով.

- Անհրաժեշտության դեպքում՝ հարմարեցումներ կամ փոփոխություններ
- Աջակցություն/ծառայություններ ընդհանուր կրթության կամ հատուկ կրթության ուսուցչի, հարակից ծառայությունների մասնագետի և/կամ պարապրոֆեսիոնալի կողմից
- Ընդհանուր կրթության ուսուցչի խորհրդատվություն և համագործակցություն՝ հաշմանդամություն չունեցող հասակակիցների հետ ներառական հնարավորություններ ապահովելու համար

Հատուկ դպրոց

Աշակերտը ուսուցում է ստանում իր դպրոցական օրվա ամբողջ ընթացքում կամ դրա մեծ մասում առանձին պետական կամ մասնավոր հաստատությունում (օրինակ՝ հատուկ կրթության կենտրոններում կամ ոչ պետական դպրոցներում)՝ հետևյալ պայմաններով.

- Աշխատակազմ և ռեսուրսներ՝ նմանատիպ կրթական կարիքներ ունեցող աշակերտների խնամքն ու կրթությունը կազմակերպելու համար
- Հաշմանդամություն չունեցող հասակակիցների հետ ներառական հնարավորությունները քիչ են կամ բացակայում են

Տնային ուսուցում

Աշակերտը ուսուցում է ստանում իր դպրոցական օրվա ամբողջ ընթացքում կամ դրա մեծ մասում տանը՝ հետևյալ պայմաններով.

- Աջակցություն/ծառայություններ տնային ուսուցում իրականացնող ուսուցչի կողմից՝ աշակերտի կարիքներին համապատասխան ժամանակացույցով
- Խորհրդատվություն և համագործակցություն ընդհանուր և հատուկ կրթության ուսուցիչների հետ՝ անհատականացված ուսուցումը պլանավորելու համար
- Հաշմանդամություն չունեցող հասակակիցների հետ ներառական հնարավորությունները քիչ են կամ բացակայում են

Հիվանդանոց / բնակության խնամքի հաստատություն

Աշակերտը ուսուցում է ստանում իր դպրոցական օրվա ամբողջ ընթացքում կամ դրա մեծ մասում հիվանդանոցում կամ պետական կամ մասնավոր բնակելի հաստատությունում՝ հետևյալ պայմաններով.

- Աջակցություն/ծառայություններ կրթության ոլորտի մասնագետի կողմից՝ աշակերտի կարիքներին համապատասխան ժամանակացույցով
- Խորհրդատվություն և համագործակցություն ընդհանուր և հատուկ կրթության ուսուցիչների հետ՝ անհատականացված ուսուցումը պլանավորելու համար
- Հաշմանդամություն չունեցող հասակակիցների հետ ներառական հնարավորությունները քիչ են կամ բացակայում են

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնակցություն նահանգային կամ շրջանի մակարդակով անցկացվող գնահատումներին
IEP թիմը որոշում է, թե ինչպես է աշակերտը մասնակցելու նահանգային և շրջանի մակարդակով անցկացվող գնահատումներին: IEP-ում պետք է նշվի, թե ինչ հարմարեցումներ և/կամ փոփոխություններ են անհրաժեշտ աշակերտին այդ թեստերը հանձնելու համար: Եթե որևէ թեստ աշակերտի համար համապատասխան չէ, IEP-ում պետք է նշվի, թե ինչու, և ինչպես է աշակերտը փոխարենը գնահատվելու:

Հատուկ կրթության և հարակից ծառայություններ[6] Դրանք նպատակային ուսուցման և ծառայությունների տեսակներ են, որոնք օգնում են աշակերտին օգտվել հատուկ կրթությունից: Դրանք կարող են ներառել, օրինակ, մեթոդիստի ծառայություն, լեզու և խոսք, ֆիզիոթերապիա և հոգեբանական ծառայություններ: IEP-ում պետք է նշվեն ծառայությունների սկսվելու և ավարտվելու ժամկետները, ծառայությունների ծավալը, որքան հաճախ են դրանք տրամադրվելու և որտեղ են իրականացվելու:

Հարմարեցումներ ընդհանուր կրթության ուսումնական ծրագրից օգտվելու համար
Սրանք փոփոխություններ են ուսուցման կազմակերպման ձևում: Հարմարեցումները չեն փոխում ուսումնական ծրագրի բովանդակությունը:

Փոփոխություններ ընդհանուր կրթության ուսումնական ծրագրից օգտվելու համար
Սրանք փոփոխություններ են ուսուցման բովանդակության մեջ: Փոփոխությունները փոխում են այն, թե ինչն է չափում առաջադրանքը:

Հարմարեցում

Փոխում է ուսուցանման ՁԵՎԸ.

- Լրացուցիչ ժամանակ առաջադրանքները կատարելու համար
- Առաջադրանքների կրճատում
- Ուսումնական ձեռնարկներ
- Լրացուցիչ ընթերցանություն կամ մաթեմատիկական ծրագրեր
- Աշխատանք փոքր խմբերում
- Աուդիոգրքեր
- Ընտրովի նստատեղ

*Ցանկն ամբողջական չէ

Փոփոխություն

Փոխում է ուսուցանման ԱՌԱՐԿԱՆ.

- Ավելի ցածր մակարդակի տեքստեր
- Այլընտրանքային նախագծեր
- Հարմարեցված ուսումնական ծրագիր
- Հարմարեցված գնահատման սանդղակ

*Ցանկն ամբողջական չէ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Օժանդակ տեխնոլոգիա / լրացուցիչ աջակցություններ
Այս աջակցությունները օգնում են աշակերտին զարգացնել, պահպանել և բարելավել իր կարողությունները: Օրինակ՝ խուլ աշակերտին թարգմանչի տրամադրում, հարմարեցված ուսումնական նյութերի օգտագործում, ինչպիսիք են աուդիոգրքերը, խոշոր տառաչափով տպագրությունը կամ ընդգծված նշումներով նյութերը:

Աջակցություն դպրոցի անձնակազմին
Այս աջակցությունները օգնում են անձնակազմին ավելի արդյունավետ աշխատել աշակերտի հետ և կարող են ներառել, օրինակ, աշխատակիցների պատրաստում այն հատուկ սարքավորումների կամ նյութերի օգտագործմանը, որոնք աշակերտին անհրաժեշտ են սովորելու համար:

Ծառայությունների տրամադրում
Երբ IEP թիմը որոշում է, թե ինչ ծառայություններ են անհրաժեշտ աշակերտին, որոշվում է նաև ծառայությունների տեսակը, հաճախականությունը և վայրը, որտեղ դրանք կտրամադրվեն՝ հիմնվելով աշակերտի անհատական կարիքների վրա: Այս որոշումը կայացնելիս IEP թիմը պետք է համոզվի, որ աշակերտը ունի համապատասխան հնարավորություններ սովորելու հաշմանդամություն չունեցող աշակերտների հետ միասին ինչպես ուսումնական, այնպես էլ այլ ոլորտներում:

Ծառայությունների տրամադրում ընդհանուր կրթության դասարանից դուրս
Հայտարարություն, որը բացատրում է, թե ինչու է անհրաժեշտ, որ աշակերտին որոշ ծառայություններ տրամադրվեն ընդհանուր կրթության ուսումնական միջավայրից դուրս, եթե դա պատեհ է:

Անգլերենին որպես երկրորդ լեզվի տիրապետող աշակերտների համար
Եթե աշակերտը ունի սահմանափակ անգլերենի իմացություն, ապա նրա լեզվական կարիքները հաշվի են առնվում այնքանով, որքանով դրանք կապված են աշակերտի IEP-ի հետ:

Երկարացված ուսումնական տարի (ESY)
Եթե աշակերտը արձակուրդներից հետո զգալի հետընթաց և/կամ դժվարություն ունի ձեռք բերած հմտությունները վերականգնելու առումով, IEP թիմը կորոշի՝ արդյոք աշակերտին պետք են հատուկ ծառայություններ կանոնավոր ուսումնական տարուց դուրս՝ գիտելիքների կորուստը նվազեցնելու համար:

Ծառայություններ արտակարգ իրավիճակների ընթացքում
Պլան այն դեպքերում, երբ արտակարգ իրավիճակների պատճառով ուսուցումը կամ ծառայությունները կամ երկուսն էլ չեն կարող տրամադրվել դպրոցում կամ առկա ձևաչափով ավելի քան 10 ուսումնական օր:

Հազվադեպ հանդիպող խանգարումների (LI) աջակցություն / սարքավորումներ
Եթե աշակերտն ունի հազվադեպ հանդիպող խանգարում, օրինակ՝ լսողության կորուստ, տեսողության խանգարում կամ օրթոպեդիկ խանգարում, քննարկվում և գրանցվում են այն սարքավորումները կամ նյութերը, որոնք անհրաժեշտ են կրթական նպատակներին հասնելու համար:

Վարքային միջամտության պլան (BIP)
Այն աշակերտների համար, որոնք ունեն զգալի վարքային դժվարություններ, կարող է մշակվել գրավոր պլան՝ նրանց աջակցելու համար՝ հիմնվելով աշակերտի վարքի ֆունկցիայի վրա: BIP-ը ներառում է կիրառվող ռազմավարությունները և սահմանում է այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեն՝ բարելավելու կամ փոխարինելու այն վարքը, որը խանգարում է նրա ուսմանը:

Անհատական անցումային պլան (ITP)
Պլան, որը կազմվում է 14 տարեկան և ավելի մեծ աշակերտների համար կամ մինչև 9-րդ դասարան: Սահմանում է նպատակներ և գործողություններ, որոնք կօգնեն աշակերտին անցում կատարել ավագ դպրոցից մեծահասակների կյանք: IEP-ը պետք է նաև անդրադառնա այն դասընթացներին, որոնք աշակերտը պետք է անցնի՝ դպրոցից հետո նպատակներին հասնելու համար: Անցումային ծառայությունների կարիքների մասին հայտարարություն պետք է ներառվի նաև աշակերտի յուրաքանչյուր հաջորդ IEP-ում:

Կրթական իրավունքների փոխանցում
Երբ աշակերտը դառնում է 17 տարեկան, նա և ծնողը/խնամակալը պետք է տեղեկացվեն, որ կրթական որոշումների կայացման իրավունքները 18 տարեկանում փոխանցվելու են աշակերտին: Այսինքն՝ աշակերտը ստանձնում է բոլոր այն իրավունքները, դերերն ու պարտականությունները, որոնք նախկինում պատկանում էին ծնողին կամ խնամակալին: Լրացուցիչ տեղեկությունների համար տես «ITP-ն և Դուք» ուղեցույցը:

ԹԻՄԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՎԱՐՏԸ

Երբ IEP թիմը ավարտում է IEP-ի քննարկումն ու մշակումը, ադմինիստրատորը ամփոփում է IEP թիմի կայացրած որոշումները և ներկայացնում Շրջանի FAPE առաջարկը: Ձեզ կխնդրեն նշել՝ համաձայն եք IEP-ի հետ, թե ոչ:

- Թիմի բոլոր անդամները, որոնք մասնակցել են IEP թիմի հանդիպմանը, կխնդրվեն ստորագրել IEP-ը՝ որպես մասնակիցներ:

- Ձեզ կտրամադրվի IEP-ի պատճեն:

- Ձեր խնդրանքով IEP-ը կթարգմանվի ձեր հիմնական լեզվով: Թարգմանված պատճենը ձեզ կտրամադրվի հարցումը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

- Ձեզ կտրամադրվի Parent IEP Experience Survey հարցաթերթիկ՝ IEP թիմի հանդիպման ձեր փորձառության վերաբերյալ: Մասնակցությունը կամավոր է և կարելի է լրացնել՝ սկանավորելով QR կոդը կամ անցնելով հարցման հղմամբ: Ձեր տրամադրած տեղեկատվությունը կօգնի բարելավել IEP գործընթացը: Ձեր պատասխանները գաղտնի կմնան:

Համաձայնության գործողություններ. [11]

- Դուք կարող եք ծանոթանալ IEP-ին նախքան այն ստորագրելը: Աշակերտի ծառայությունների տրամադրումը չի սկսվի, մինչև չստորագրեք և չվերադարձնեք IEP-ն:

- Դուք կարող եք համաձայնություն տալ IEP-ին ամբողջությամբ կամ մասնակիորեն: Կիրականացվեն միայն այն հատվածները, որոնց դուք տվել եք ձեր համաձայնությունը:

- Եթե դուք համաձայն չեք IEP-ի որոշ մասերի կամ ամբողջ IEP-ի հետ՝

  ◊ Ձեզ կխնդրեն հստակեցնել անհամաձայնության ոլորտները (գնահատում, իրավասություն, ուսուցման միջավայր կամ կոնկրետ ուսուցում և ծառայություններ):

  ◊ Միշտ խրախուսվում է փորձել անհամաձայնությունը քննարկել և լուծել IEP թիմի մյուս անդամների հետ:

- Եթե դուք դրանից հետո էլ համաձայն չեք IEP-ին, ադմինիստրատորը IEP-ում կգրանցի ձեր մտահոգություններն ու մեկնաբանությունները այն ոլորտների վերաբերյալ, որտեղ առկա է անհամաձայնություն:

- Ձեզ կբացատրվեն անհամաձայնությունը լուծելու հաջորդ քայլերը:
  [Տե՛ս *«Ծնողների ուղեցույցը հատուկ կրթության ծառայությունների մասին (ներառյալ ընթացակարգային իրավունքները և երաշխիքները)»*]

- Անկախ նրանից՝ համաձայն եք IEP-ի հետ, թե ոչ, խնդրում ենք ժամանակին հայտնել ձեր որոշումը՝ ստորագրելով, թվագրելով և վերադարձնելով IEP-ի համաձայնության էջը, որպեսզի աշակերտին տրամադրվող ծառայություններն ու աջակցությունները չհետաձգվեն:

Վեճերի լուծման տարբերակներ.
Եթե դուք համաձայն չեք աշակերտին առաջարկվող IEP-ին և/կամ FAPE-ի առաջարկին նվազագույն սահմանափակումներով միջավայրում (LRE), ընտանիքների համար հասանելի են վեճերի լուծման մի շարք տարբերակներ՝ առանց որևէ վճարի: Վեճերի այլընտրանքային լուծում (Alternate Dispute Resolution, ADR) և Վեճերի ոչ ֆորմալ լուծում (Informal Dispute Resolution, IDR) գործընթացները ընտանիքներին հնարավորություն են տալիս լուծելու անհամաձայնությունները ավելի արագ և արդյունավետ եղանակով: Վեճերի լուծման տարբեր եղանակների մասին մանրամասների համար տես *Հատուկ կրթության ծառայությունների ծնողական ուղեցույցը (ներառյալ Ընթացակարգային իրավունքներն ու երաշխիքները)*:

IEP-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

IEP թիմի հանդիպումից հետո դպրոցը՝

- կիրականացնի աշակերտի ամբողջ IEP-ն կամ միայն այն մասերը, որոնց դուք տվել եք ձեր համաձայնությունը:
- IEP-ի պատճենները կտրամադրի աշակերտի ուսուցչին և դպրոցի մյուս աշխատակիցներին, որոնք պատասխանատու են IEP-ի իրականացման համար, որպեսզի նրանք կարողանան սկսել աշակերտին ծառայություններ տրամադրել:[12]
- կտեղեկացնի Շրջանի այն աշխատակիցներին, որոնք պատասխանատու են հետագա գործողությունների համար, օրինակ՝ գնահատման կազմակերպման, IEP-ի թարգմանության կամ փոխադրության ապահովման հարցերով:
- հաշվետու գնահատման ժամանակաշրջաններում ձեզ կտրամադրի հաշվետվություններ աշակերտի առաջընթացի մասին՝ նրա IEP նպատակներին և ենթանպատակներին հասնելու ուղղությամբ:
- առնվազն տարին մեկ կվերանայի IEP-ն: Եթե դուք կամ դպրոցը կարծում եք, որ աշակերտը առաջընթաց չի գրանցում իր նպատակների ուղղությամբ, կամ եթե կան մտահոգություններ նրա կրթական ծրագրի վերաբերյալ, ցանկացած ժամանակ կարող է պահանջվել հանդիպում՝ IEP-ն վերանայելու և փոփոխելու համար:[4]
- թեև խիստ խորհուրդ է տրվում, որ դուք մասնակցեք հանդիպմանը, եթե չեք մասնակցում, IEP-ի պատճենը ձեզ կուղարկվի: Դպրոցի ներկայացուցիչը կապ կհաստատի ձեզ հետ՝ IEP-ի բովանդակությունը քննարկելու համար:

IEP թիմի հանդիպումից հետո դուք՝ որպես ծնող/խնամակալ, պետք է՝

- հարցնեք այն աշխատակիցներին, որոնք պատասխանատու են ձեր աշակերտին հատուկ կրթության ծառայություններ տրամադրելու համար, թե ինչ կարող եք անել տանը՝ նրա հմտությունները ամրապնդելու համար:
- ուսումնական տարվա ընթացքում կազմակերպեք հանդիպումներ աշակերտի ուսուցչի, ծառայություններ տրամադրող մասնագետների և/կամ դպրոցի ադմինիստրացիայի հետ՝ նրա առաջընթացը քննարկելու, հարցեր տալու կամ մտահոգություններ արտահայտելու համար:
- այս ուղեցույցի Ռեսուրսներ բաժնում գտնեք դպրոցական շրջանի աշխատակիցների և այլ անձանց հեռախոսահամարները, որոնց կարող եք դիմել, եթե հարցեր կամ լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք:
- IEP-ի պատճենը կամ IEP-ից տեղեկությունները կիսվեք այն մասնագետների հետ, որոնք աշխատում են ձեր աշակերտի հետ, բայց չեն հանդիսանում Շրջանի աշխատակիցներ, օրինակ՝ մասնավոր թերապևտի կամ դաստիարակի հետ:
- Ստեղծեք թղթապանակ կամ նոթատետր՝ ձեր աշակերտի IEP-ների, հաշվետվությունների և հատուկ կրթության հետ կապված այլ փաստաթղթերի պատճենները պահելու համար:

ԻՆՉԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ. IEP ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

- Արդյո՞ք IEP-ի ընթացիկ կատարողականի մակարդակի (PLP) բաժինը պարունակում է տեղեկություն ձեր աշակերտի ուսումնական, զարգացման և/կամ գործառնական կարիքների մասին:
- Արդյո՞ք ձեր աշակերտի PLP-ում ներկայացված տեղեկությունները հստակ ձևակերպված են և ներառում է բաժին նրա ուժեղ կողմերի, պահանջմունքների և հաշմանդամության ազդեցության մասին:
- Արդյո՞ք PLP-ն ներառում է գնահատման տվյալներ, ուսումնական ծրագրի վրա հիմնված կատարողականի չափումներ Շրջանի կամ Նահանգի գնահատումներում, ինչպես նաև ստանդարտացված թեստերի արդյունքներ:
- Արդյո՞ք տարեկան նպատակները անմիջապես կապված են ձեր աշակերտի այն կարիքների հետ, որոնք նշված են PLP-ում:
- Արդյո՞ք աշակերտի տարեկան նպատակները համապատասխան են:
- Արդյո՞ք աշակերտի տարեկան նպատակները հստակ ձևակերպված են և չափելի:
- Արդյո՞ք IEP-ում նշված է, թե ինչպես է աշակերտը մասնակցելու Շրջանի և Նահանգի թեստավորումներին:
- Արդյո՞ք IEP-ում նշված է, թե ինչպես կարող է աշակերտը մասնակցել ընդհանուր կրթության ուսումնական ծրագրին:
- Արդյո՞ք քննարկվել և IEP-ում անդրադարձվել է հարակից ծառայությունների անհրաժեշտությանը, եթե դա կիրառելի է:
- Արդյո՞ք IEP-ում նշված է, թե որտեղ և որքան հաճախ պետք է իրականացվեն IEP-ում նշված ծառայությունները:
- Արդյո՞ք նշված հարմարեցումները/փոփոխությունները համապատասխան են:
- Արդյո՞ք ձեզ հնարավորություն է տրվել IEP թիմի հանդիպման ընթացքում ներկայացնելու ձեր կարծիքը և հարցեր տալու:
- Արդյո՞ք ձեզ բացատրվել է, թե ինչպես է IEP-ի բովանդակությունը հաղորդվելու այն աշխատակիցներին, որոնք պատասխանատու են դրա իրականացման համար:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՈՐՈՆՔ ԾՆՈՂՆԵՐԸ/ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԸ

- Գնահատականների թերթիկներ և առաջընթացի հաշվետվություններ
- Ստանդարտացված թեստերի արդյունքներ
- Գնահատումների արդյունքներ
- Անհատականացված կրթական ծրագրի (IEP) պատճեն
- Հաշմանդամության և սովորելու կարողության հետ կապված բժշկական գրառումներ
- Կարգապահական միջոցառումների ծանուցումներ
- Նշումներ աշակերտի վարքի կամ առաջընթացի մասին
- Նամակներ կամ գրառումներ՝ դպրոցին կամ ուսուցչին ուղղված և նրանցից ստացված, ինչպես նաև հատուկ կրթության մասնագետների, գնահատողների և ադմինիստրատորների հետ հաղորդակցությունից
- IEP հանդիպումների վերաբերյալ ծանուցումներ
- Հաճախելիության գրառումներ
- Ծնող–աշակերտ ձեռնարկ
- Աշակերտի ստացած մրցանակներ
- Դպրոցական աշխատանքների նմուշներ

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Հանդիպումների և դրանց արդյունքների վերաբերյալ գրառումներ
- Այն ամսաթվերը, երբ դուք ուղարկել կամ ստացել եք կարևոր փաստաթղթեր
- Կասեցման կամ այլ կարգապահական միջոցառումների ամսաթվեր
- Հեռախոսազանգերի վերաբերյալ նշումներ (ներառյալ ամսաթիվը, այն անձը, որի հետ խոսել եք, և քննարկվածի կարճ նկարագրությունը)

ՀԱՃԱԽ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԵԶՐԵՐ

Հարմարեցումներ
Ժամանակի, ձևաչափի, միջավայրի, ժամանակացույցի, ակնկալիքների, պատասխանի ձևի և/կամ ներկայացման մեջ կատարվող փոփոխություններ, որոնք հնարավորություն են տալիս աշակերտին կատարել նույն առաջադրանքը կամ թեստը, ինչ մյուս աշակերտները: Հարմարեցումը չի փոխում այն, թե ինչն է չափում թեստը կամ առաջադրանքը: Օրինակ՝ եթե ֆիզիկական խնդիրներով աշակերտը դժվարանում է գրել, նրան կարող է թույլատրվել պատասխանել բանավոր, մինչ մյուս աշակերտները պարտավոր են գրել պատասխանները: Այդ դեպքում աշակերտից ակնկալվում է իմանալ նույն նյութը և պատասխանել նույնքան ամբողջական, որքան մյուսները:

Հարմարեցված ֆիզիկական կրթություն (APE)
Խոշոր մոտորիկայի վարժությունների, խաղերի, սպորտի և ռիթմիկ վարժությունների ծրագիր այն աշակերտների համար, որոնք իրենց անկարողության պատճառով չեն կարող անվտանգ կամ արդյունավետ մասնակցել ընդհանուր կամ փոփոխված ֆիզիկական կրթության ծրագրերին կամ հատուկ նախագծված ֆիզիկական կրթության ծրագրին Special Day Program (SDP)-ում:

Այլընտրանքային ուսումնական ծրագիր
Չափորոշիչների վրա հիմնված հիմնական ուսումնական ծրագրի փոփոխված տարբերակ, որը նախատեսված է միջինից ծանր աստիճանի հաշմանդամություն ունեցող աշակերտների համար, որոնք չեն կարող օգտվել ընդհանուր կրթության հիմնական ուսումնական ծրագրից առանց զգալի փոփոխությունների:

IEP-ի տարեկան վերանայում
IEP թիմի հանդիպում, որը անցկացվում է առնվազն տարին մեկ անգամ՝ աշակերտի հատուկ կրթության ծրագրի, նպատակների ուղղությամբ առաջընթացի և տրամադրվող ծառայությունների քննարկման համար:

Օժանդակ տեխնոլոգիա (AT)
Ցանկացած առարկա, սարքավորում, արտադրանք կամ համակարգ, որը կարող է լինել առևտրային, փոփոխված կամ հատուկ պատրաստված և օգտագործվում է անկարողություն ունեցող աշակերտների գործառնական կարողությունները բարձրացնելու, պահպանելու կամ բարելավելու համար:

Աուտիզմ (AUT)
Զարգացման խանգարում, որը զգալիորեն ազդում է բանավոր և ոչ բանավոր հաղորդակցության և սոցիալական փոխազդեցության վրա, սովորաբար նկատվում է մինչև երեք տարեկան հասակը և բացասաբար է ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա: Աուտիզմի հետ հաճախ կապված են նաև կրկնվող գործողություններ և կարծրատիպային շարժումներ, շրջակա միջավայրի կամ առօրյա ռեժիմի փոփոխություններին դիմադրություն և զգայական փորձառությունների նկատմամբ անսովոր արձագանքներ:

Լսողական-բանավոր թերապիա (AVT)
Ընտանիքակենտրոն միջամտության ծառայություն, որը նպատակ ունի լսողության միջոցով առավելագույնի հասցնել լսողական, խոսքային և լեզվական զարգացմանը նպաստող հմտությունները:

Վարքային միջամտության պլան (BIP)
Անհատական պլան, որը մշակվում է որոշակի խնդրահարույց վարքը կարգավորելու համար: BIP-ի բաղադրիչներն են խնդրահարույց վարքը, դրա առաջացման ենթադրվող պատճառը և կարգավորելու ռազմավարությունները: Դրանք ներառում են կանխարգելման, խրախուսման, ուղղորդման և ուսուցման ռազմավարություններ:

Խլություն-կուրություն (DB)
Անկարողություն, որը բացասաբար է ազդում կրթական առաջադիմության վրա և բնութագրվում է միաժամանակ լսողության և տեսողության խանգարումներով: Այս երկու խանգարումների համակցությունը առաջացնում է հաղորդակցության և զարգացման ու կրթական այնպիսի լուրջ կարիքներ, որոնք չեն կարող բավարարվել միայն խուլ կամ միայն կույր աշակերտների համար նախատեսված հատուկ կրթական ծրագրերում:

Խուլություն (Deaf)
Լսողության խանգարում, որի հետևանքով լեզվական տեղեկատվության ընկալումը լսողության միջոցով՝ ուժեղացուցիչ սարքերի օգտագործմամբ կամ առանց դրանց, խանգարվում է և բացասաբար է ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա:

Զգացմունքային խանգարում (ED)
Վիճակ, որը երկար ժամանակահատվածում և զգալի աստիճանով դրսևորվում է հետևյալ հատկանիշներից մեկով կամ մի քանիսով և բացասաբար է ազդում կրթական առաջադիմության վրա.

- Սովորելու անկարողություն, որը չի կարող բացատրվել մտավոր, զգայական կամ առողջական գործոններով
- Հասակակիցների և ուսուցիչների հետ բավարար միջանձնային հարաբերություններ ձևավորելու կամ պահպանելու անկարողություն
- Անհամապատասխան վարք կամ արձագանքներ սովորական իրավիճակներում
- Ընդհանրացված դժբախտության կամ ընկճվածության տրամադրություն
- Անձնական կամ դպրոցական խնդիրների հետ կապված ֆիզիկական ախտանշանների կամ վախերի զարգացման միտում

Բժշկական հաստատված անկարողություն (EMD)
Խանգարող բժշկական վիճակ կամ բնածին համախտանիշ, որի դեպքում IEP թիմը որոշում է, որ մեծ հավանականություն կա, որ աշակերտին անհրաժեշտ կլինեն հատուկ կրթության ծառայություններ: Այս իրավասության չափանիշը կիրառվում է միայն երեքից հինգ տարեկան երեխաների նկատմամբ:

Երկարացված ուսումնական տարի (ESY)
Հատուկ կրթության ծառայություններ, որոնք տրամադրվում են սովորական ուսումնական տարուց դուրս՝ նվազեցնելու համար նախկինում ձեռք բերված կարևոր հմտությունների կորուստը այն աշակերտների համար, ովքեր դպրոցական արձակուրդների ընթացքում ցուցաբերել են զգալի հետընթաց և/կամ դժվարություն են ունեցել հմտությունները վերականգնելու հարցում:

Թույլ լսողություն (HOH)
Լսողության խանգարում, որը կարող է լինել մշտական կամ փոփոխական և բացասաբար է ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա:

Անհատական անցումային պլան (ITP)
Պլան, որը մշակվում է IEP-ի շրջանակում 14 տարեկան և ավելի բարձր տարիքի աշակերտների համար կամ մինչև 9-րդ դասարան: Պլանը սահմանում է նպատակներ և գործողություններ՝ աշակերտի հետաքրքրությունների և կարիքների հիման վրա դպրոցից դեպի մեծահասակների կյանք անցումը նախապատրաստելու համար:

Հատուկ կրթության համար նախնական գնահատում
Գնահատում, որի նպատակն է որոշել՝ արդյոք աշակերտին անհրաժեշտ են հատուկ կրթության ծառայություններ: Գնահատումը կարող է ներառել ծնողի/խնամակալի տրամադրած տեղեկությունները, արձագանքը միջամտություններին, ուսուցչի տեղեկությունները, ուսումնական ծրագրի վրա հիմնված գնահատումներ, Շրջանի և Նահանգի թեստերի արդյունքներ, գնահատականների թերթիկներ, աշակերտի դիտարկումներ, առկա այլ տվյալներ և անհատական թեստեր: Նախնական գնահատման համար անհրաժեշտ է ծնողի/խնամակալի համաձայնությունը: Ծնողի/խնամակալի համաձայնությունը ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում պետք է կազմակերպվի IEP թիմի հանդիպում:

Նախնական IEP
Աշակերտի առաջին IEP-ն, որը կազմվում է հատուկ կրթության նախնական գնահատումից հետո՝ որոշելու, թե արդյոք աշակերտը իրավասու է հատուկ կրթության ծառայությունների համար, թե ոչ:

Մտավոր խանգարում (ID)
Հաշմանդամություն, որը բնութագրվում է ընդհանուր մտավոր գործունեության զգալիորեն միջինից ցածր մակարդակով և հարմարվողական վարքի պակասներով, օրինակ՝ հաղորդակցության, ինքնասպասարկման, առողջության և անվտանգության, ինչպես նաև ինքնուրույն կյանքի հմտությունների ոլորտներում, ինչը բացասաբար է ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա:

Լեզվի և խոսքի ծառայություններ (LAS)
Հարակից ծառայություն, որը աջակցում է այն աշակերտների կրթական ծրագրին, որոնք ունեն հաղորդակցության խանգարում, որն ազդում է ընդհանուր կրթության ուսումնական ծրագրին մասնակցության և առաջընթացի վրա:

Ուսումնական կենտրոն (Learning Center)
Դասասենյակ, որտեղ ուսուցիչները տրամադրում են նպատակային ուսուցում:

Հազվադեպ հանդիպող անկարողություն (LI)
Անկարողություն, որը բացասաբար է ազդում կրթական առաջադիմության վրա և հանդիպում է համեմատաբար փոքր թվով աշակերտների մոտ, օրինակ՝ լսողության կորուստ, տեսողության խանգարում կամ օրթոպեդիկ խանգարում:

Բազմակի անկարողություններ (MD)
Անկարողություն, որը բնութագրվում է երկու կամ ավելի անկարողությունների առկայությամբ, որոնցից մեկը պետք է լինի լսողության, օրթոպեդիկ կամ տեսողության խանգարում, և որը բացասաբար է ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա:

Ոչ պետական գործակալություն (NPA)
Մասնավոր հաստատություն կամ մասնագետ, որը հավաստագրված է Կալիֆորնիայի կրթության վարչության (CDE) կողմից և տրամադրում է հարակից ծառայություններ, որոնք անհրաժեշտ են աշակերտի IEP-ի իրականացման համար:

Ոչ հանրային դպրոց (NPS)
Կալիֆորնիայի կրթության վարչության (CDE) կողմից հավաստագրված դպրոց, որը հատուկ կրթության այլընտրանքային տեղաբաշխման տարբերակ է անկարողություն ունեցող աշակերտների համար:

Ենթանպատակներ
Չափանիշներ կամ քայլեր, որոնք ուղղված են IEP նպատակներին հասնելուն:

Էրգոթերապիա
Հարակից ծառայություն, որը վերաբերում է ֆիզիկական, զգայական-շարժողական և միջավայրային գործոններին ու գործունեություններին, որոնք աջակցում են կամ սահմանափակում են աշակերտի մասնակցությունը դպրոցական կյանքին և ուսումնական ծրագրին հասանելիությունը:

Օրթոպեդիկ խանգարում (OI)
Անկարողություն, որը բնութագրվում է օրթոպեդիկ կամ ֆիզիկական հատուկ կարիքներով՝ վնասվածքի, բնածին խանգարման կամ հիվանդության հետևանքով, և որը բացասաբար է ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա:

Առողջական այլ խանգարում (OHI)
Անկարողություն, որը բնութագրվում է սահմանափակ ուժով, կենսունակությամբ կամ զգոնությամբ՝ քրոնիկական կամ սուր առողջական խնդիրների պատճառով, ինչպիսիք են սրտային հիվանդությունը, տուբերկուլյոզը, ռևմատիկ տենդը, նեֆրիտը, ասթման, մանգաղաձև բջջային անեմիան, հեմոֆիլիան, էպիլեպսիան, կապարի թունավորումը, լեյկեմիան կամ շաքարային դիաբետը, ինչը բացասաբար է ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա:

Ֆիզիկական թերապիա (PT)
Հարակից ծառայություն, որը աջակցում է աշակերտի կրթական ծրագրին և գնահատում ու զարգացնում է հետևյալ ոլորտները՝ կեցվածք, հավասարակշռություն, ուժ, կոորդինացիա, շարժունակություն և խոշոր շարժողական հմտություններ: Դպրոցական ֆիզիկական թերապիան կարող է ներառել առաջադրանքի կամ միջավայրի հարմարեցում և բաղկացած լինել անմիջական միջամտությունից, խորհրդատվությունից և/կամ վերահսկումից:

Հարակից ծառայություններ
Հատուկ ծառայություններ, որոնք օգնում են անկարողություն ունեցող աշակերտին օգտվել հատուկ կրթությունից: Հարակից ծառայությունների օրինակներ են՝ հարմարեցված ֆիզիկական կրթությունը, աուդիոլոգիական ծառայությունները, ֆիզիկական թերապիան, օկուպացիոն թերապիան, լեզվի և խոսքի թերապիան և խորհրդատվական ծառայությունները:

Մեթոդիստի (RSP)
Ծրագիր, որը տրամադրում է ուսուցում և ծառայություններ՝ աջակցելու ընդհանուր կրթության դասարանում տեղաբաշխված անկարողություն ունեցող աշակերտներին:

Հատուկ օրվա ծրագիր (SDP)
Առանձին դասարան, որը վարում է հատուկ կրթության ուսուցիչը և որը տրամադրում է ուսուցում և ծառայություններ անկարողություն ունեցող աշակերտների համար:

Հատուկ ուսուցման խանգարում (SLD)
Անկարողություն, որը բնութագրվում է հիմնական հոգեբանական գործընթացներից մեկի կամ մի քանիսի խանգարմամբ, որոնք ներգրավված են խոսքային կամ գրավոր լեզուն հասկանալու կամ օգտագործելու մեջ: Դա կարող է արտահայտվել լսելու, մտածելու, խոսելու, կարդալու, գրելու, ուղղագրելու կամ մաթեմատիկական հաշվարկներ կատարելու դժվարություններով, որոնք բացասաբար են ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա: Կարող է ներառել այնպիսի վիճակներ, ինչպիսիք են ընկալման խանգարումները, ուղեղի վնասվածքը, ուղեղի նվազագույն դիսֆունկցիան, դիսլեքսիան և զարգացման աֆազիան:

Խոսքի կամ լեզվի խանգարում (SLI)
Հաղորդակցության խանգարում, ինչպիսիք են կակազությունը, արտասանության խանգարումը, լեզվական խանգարումը կամ ձայնի խանգարումը, որը բացասաբար է ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա:

Վնասվածքային ուղեղային վնասվածք (TBI)
Ուղեղի ձեռքբերովի վնասվածք, որը առաջանում է ֆիզիկական ուժի ազդեցությամբ և կարող է հանգեցնել ամբողջական կամ մասնակի գործառնական անկարողության կամ հոգեսոցիալական խանգարման, կամ երկուսի միասին, ինչը բացասաբար է ազդում աշակերտի կրթական առաջադիմության վրա:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Լոս Անջելեսի միասնական դպրոցական շրջանի ռեսուրսներ

Հատուկ կրթության վարչություն
Վեբկայք՝ https://sped.lausd.org

Դպրոցի և ընտանիքի աջակցության ծառայությունների (SFSS) գրասենյակ
Վեբկայք՝ https://lausd.org/spedContactUs
Հեռախոս՝ (213) 241-6701
Այս գրասենյակը կարող է աջակցել հատուկ կրթության հետ կապված հարցերի, մտահոգությունների և/կամ բողոքների դեպքում, ինչպես նաև աշակերտի IEP-ի վերաբերյալ հարցերում: Ավելի մանրամասն տեղեկություն ստանալու համար այցելեք Հատուկ կրթության բաժնի կայքի *Contact Us* բաժինը:

Ծնող–աշակերտ ձեռնարկը հասանելի է Շրջանի բոլոր դպրոցներում: Այցելեք Շրջանի կայքը:
Վեբկայք՝ https://www.lausd.org/Page/16910

Համայնքային տեղեկատվական հանձնաժողով (CAC)
Վեբկայք՝ https://www.lausd.org/Page/10285
CAC-ի պարտականությունները սահմանված են Կալիֆոռնիայի կրթության օրենսգրքով և ներառում են խորհրդատվական դեր կատարել հատուկ կրթության տեղական ծրագրի մշակման, փոփոխման և վերանայման հարցերում:

Այլ ռեսուրսներ

Կալիֆոռնիայի կրթության վարչություն (CDE)
Վեբկայք՝ http://www.cde.ca.gov
Հեռախոս՝ (916) 319-0800

ԱՄՆ կրթության դեպարտամենտ
Վեբկայք՝ https://sites.ed.gov/idea
Հեռախոս՝ 1-800-872-5327

Զարգացման ծառայությունների վարչություն (DDS)
Վեբկայք՝ https://www.dds.ca.gov/rc/
Հեռախոս՝ 1-833-421-0061
DDS-ը վերահսկում է զարգացման խանգարումներ ունեցող Կալիֆորնիայի բնակիչների համար ծառայությունների համակարգումը և տրամադրումը՝ նահանգի ամբողջ տարածքում գործող 21 համայնքային, ոչ առևտրային գործակալություններից կազմված ցանցի միջոցով, որոնք հայտնի են որպես Տարածքային կենտրոններ (Regional Centers):

Լոս Անջելեսի շրջանի California Children's Services (CCS) ծրագիր
Վեբկայք՝ http://publichealth.lacounty.gov/cms/ccs.htm
Հեռախոս՝ 1-800-288-4584
Էլփոստ՝ CCS@ph.lacounty.gov
CCS-ը նահանգային ծրագիր է, որը համակարգում և ֆինանսավորում է որոշակի առողջապահական կարիքներ ունեցող մինչև 21 տարեկան երեխաների բժշկական օգնությունն ու թերապևտիկ ծառայությունները:

Վերականգնողական ծառայությունների վարչություն (DOR)
Վեբկայք՝ https://www.dor.ca.gov/
Հեռախոս՝ 1-800-952-5544 / **TTY:** 1-844-729-2800
Վերականգնողական ծառայությունների վարչությունը (DOR) օգնում է Կալիֆորնիայի անկարողություն ունեցող բնակիչներին ձեռք բերել և պահպանել աշխատանք, ինչպես նաև առավելագույնի հասցնել նրանց հավասար հնարավորությունները և իրենց համայնքներում ինքնուրույն ապրելու կարողությունը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. **Անվճար համապատասխան հանրային կրթություն (FAPE) 34 CFR §300.17**
2. **Նվազագույն սահմանափակումներով միջավայի պահանջներ 34 CFR §300.114-117**
3. **Ծնողի մասնակցությունը 34 CFR §300.322**
4. **Անհատականացված կրթական ծրագրի ժամանակացույցը Կրթության օրենսգիրք §56043**
5. **Անհատականացված կրթական ծրագրի թիմի անդամներ Կրթության օրենսգիրք §56341**
6. **Հարակից ծառայություններ 34 CFR §300.34**
7. **Դպրոցի գրառումների հասանելիություն 34 CFR §300.613**
8. **Անհատականացված կրթական ծրագրի բովանդակությունը Կրթության օրենսգիրք §56345**
9. **Հաշմանդամություն ունեցող երեխա 34 CFR §300.8**
10. **Իրավասության վերաբերյալ որոշում 34 CFR §300.306**
11. **Համաձայնություն Կրթության օրենսգիրք §56346**
12. **Անհատականացված կրթական ծրագրի պատճեններ անձնակազմի համար Կրթության օրենսգիրք §56347**

Այցելեք Կալիֆոռնիայի կրթության վարչության կայքը՝ IDEA օրենքների և կանոնակարգերի, ինչպես նաև դրանց հետ կապված Կալիֆոռնիայի օրենքների անվճար հղումները գտնելու համար, այդ թվում նաև այն օրենքները, որոնք հիշատակվում են «IEP-ն և Դուք» ուղեցույցում՝ հետևյալ հասցեով՝
https://www.cde.ca.gov/sp/se/lr/

ՆՇՈՒՄՆԵՐ

IEP-Ի ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ[4]



Նշում. ծնողը/խնամակալը կարող է ցանկացած ժամանակ դիմել IEP թիմի հանդիպում կազմակերպելու խնդրանքով, եթե դա անհրաժեշտ է համարում: Այս հանդիպումը պետք է անցկացվի դիմումը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: